ճարին, եւ բնակեցոյց զՀռովմայեցի զաղթականն. ըզ-
չարեալ Հրէայք ընդ այս ապստամբեցին 'ի Կայսրէ եւ
տային պատերազմ ընդ Թովսոի եպարքոսին Հրէաստանի,
առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի Բար Կոքեբայ,
այսինքն աստղորդի, որ էր գործովք չարագործ եւ ըս-
պանող. բայց անուամբ իւրով մեծարանեալ պարծէր, իբր
յերկնից ծագեալ նոցա փրկիչ։ Հարուստ գնդաւ ասպա-
տակէր յԱսորիս, եւ կալեալ զքրիստոնեական ազգէր, զի
ոչ կամէին երթալ ընդ նմա 'ի ճակատ ընդդէմ Հռովմա-
յեցւոց. եւ առաւել եւս մոլեգնեալ կամէր ածել զնոսա
տանջանօք յուրացութիւն. և այնքան սատակացաւ մարտն
ասէ՝ մերս Խորենացի, մինչև 'ի նոսա հայելով 'ի բաց կա-
ցին հարկելոյ Հռովմայեցւոց Ասորիք, Միջագետք եւ
Պարսք ամենայն, բաց 'ի մերոյն Արտաշիսէ։ Առաքեցաւ
յինքնակալն զօրավարն Յուլիոս Սեւերոս լեգէոնօք 'ի
Հրէաստան, եւ ըստ Խորենացւոյն ինքնին Կայսրն եկ 'ի
Պաղեստին. քանզեաց զամուրս աւելի քան զ50, զքա-
ղաքս և գիւղս 900։ Յետ առին Բեթորոնի (յայնկոյս Յորդանանու) ուր անկաւ Բար Կոքեբ յանդ եկ պատերազմն
(135)։ Աւելի քան զ580,000 այր 'ի Հրէից պատմի կոտորեալ, եւ այլոց բազմաց այլ իմն ազգ վախճանեալ. մեծ-
մասն մնացելոցն եղեւ վաճառակուր և ածաւ վտարանդի
յերկիր օտար։ Ադրիանոս չինեաց զքաղաք իւր նոր 'ի
նոյն տեղւոջ, զոր պարունակէ այժմ. եւ մասնաւոր իմն
նախախնամութեամբ փակեաց զլեառն Գողգոթայ 'ի մէջ
պարսպացն։ Չ'իշխէր ոք այնուհետեւ 'ի Հրէից երթալ
մերձենալ 'ի վայրսն Երուսաղէմի, այլ յետոյ առին զնոց
հրաման միանգամ 'ի տարւոջ երթալ աշխարել 'ի վերայ
քաղաքին իւրեանց, ուր տիրէր այնուհետեւ պաշտօն
հեթանոսութեան։ Բայց եւ քրիստոնէից, զոր տակա-
ւին ընդ Հրէայսն շփոթէին հեթանոսք, չ'էր համարձակ
մտանել անդր։ Ի թշնամանս Հրէից և առ 'ի տալ մոռանալ
խսպառ զՀայրենիս իւրեանց, ետ կանգնել Ադրիանոս պատ-
կեր խոզենի մարմարեայ 'ի վերայ մոյ 'ի դրանց քաղաքին
որ տանի 'ի Բեթղէհէմ. (արեւմտեան, որ այժմ կոչի Յոպ-
պէու կամ Հայր Աբրահամու դուռ)։ Սակայն և ոչ 'ի նուի-
րական տեղիս քրիստոնէիցն խնայեցաւ. 'ի Գողգոթա